


զորբալոյս և զաստուածագործակ սուրբ մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն ավազանաւն յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի և ի ժառանգակցութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ: Զնոյնն ի ճակատն նշան Հաստատութեան, եւ ի յաւծումն քահանայութեան, և ի նորոգումն սուրբ եկեղեցոյ, շնորհաւք Սուրբ Հոգւոյն և Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ արհնելոյն ի յամենայն յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ զիր արհնութեան բարձր հրամանիս մերոյ ի յրատ ի մեզ մարդեղութեանն, ի մարմնով ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ՌԻՃԹ ամին: Եւ ի սրբոյն Գրիգորէ՝ ՌՃԹ ամին, եւ ըստ գումարին ի մեծ թով: Հայոց ՊԾԸ ամին, եւ ի մեր նստիլս ի սուրբ աթոռս որ է ամ Բ, և ամիս է, և ար ԻԶ. ի Յունիս ամսոյ ԻԶ. ի հայրապետանիստն ի Սըսոյ կլայն: Եւ վասն առաւել Հաստատութեան ավտալոյ ձեր ձեռնագրեցաք մեր սովորական կարմիր Ձեռնագրով: Կնքեցաւ վերոյ ծաղկաւետ տիրական ամէնեւրեւելի մեծ մատանալս: Կամաւք բարերար մարդայսիրին Աստուծոյ արհնելոյն յաւիտեանս. ամէն: — Գրեցաւ ձեռամբ Յոհաննէսի գրագրի:

 **ՅԱԿՈՒ ՇՆՈՐՀԱԻԲՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:**

1. Ըստ այսմ՝ 1408 թուականի Փրկչին՝ յառաջին օր նոյեմբերի (սոս Ամենայն Սրբոց, ըստ Յայրմաւորաց) օծուեր է կաթողիկոս: